

ՋԵԼ ԵՎ ՈՒՐԲԱԹԱՋԵԼ

2. Ս. ԱՆԱՍՅԱՆ

XII/XIII դարերում հայ կիրիկյան մատենագրության մեջ երևան է գալիս մի նոր բառ՝ զել (գոյական), որից՝ զել առնել (բայ) և ուրբարազել (բարդ բառ): Այս բառը մեր բանասիրական գրականությանը հայտնի չի եղել, ուստի և լեզվաբանների ուշադրությանը չի արժանացել:

Մենք զել բառը գտել ենք միայն «Արմատ հաւատոյ» կամ «Համառոտ հաւաքումն սրբոց վարդապետաց» կոչված դավանաբանական անտիպ ժողովածուի մեջ, որի հեղինակությունը, մեր հայտնաբերած մատենագրական տվյալներով, անհերքելիորեն պատկանում է Վարդան Այգեկցուն: Այս աշխատության կրկնակ՝ ընդարձակ և համառոտ խմբագրություններից Երևանի պետական Մատենադարանում մեզ հայտնի են 9 ձեռագիր օրինակներ՝ № № 3295, 512, 1982, 4425, 6567, 7255, 2080, 1337 և 4063:

16 գլուխներից բաղկացած այս աշխատության մեջ, որի վերջնական խմբագրությունն ավարտված է 1205 թ., Վարդան Այգեկցին վիճաբանության համար ի մի է հավաքել նյութեր՝ ի պաշտպանություն հայ եկեղեցու դավանական դրույթների և ծիսական կարգերի «ընդդեմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց», ինչպես ասված է առաջաբանում: Ըստ այսմ՝ հիմնականում ուղղված է քաղկեդոնականների դեմ և վերջում միայն երկու գլուխներ է պարունակում հակոբեկ ասորիների դեմ:

Ասորիների դեմ ուղղված գլուխներից մեկը (գլ. ԺԵ), գրքի վերջում ղետեղված զլխացանկի համաձայն, խորագրված է այսպես. «Եւ զի սուտ է ուրբարաք զել առնէ»¹: Իսկ Մատենադարանի մի ուրիշ ձեռագիր, որը 8356 թվահամարն է կրում և «Արմատ հաւատոյ» ժողովածուն կազմելու համար հավաքված նախնական նյութեր է պարունակում, այդ նույն զլխին վերաբերող նյութերի համար ունի այսպիսի խորագիր. «Վկայութիւնք յաստուածաշունչ գրոց՝ վասն ուրբարազելի, զի սուտ է յամենայնի»²:

Ուրեմն՝ «Արմատ հաւատոյ»-ն մեզ տալիս է ուրբարաք զել առնել և ուրբարաքազել ձևերը:

Որոշումների ընթացքում պարզվեց, որ ուրբարաքազել բառը մեկ անգամ օգտագործված է նաև Ներսես Շնորհալու թղթերում, XII դ. կեսերին: Այն նամակում, որ Շնորհալին իր եղբոր՝ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի (1113—1166 թթ.) անունից գրել էր Միջագետքի հայերին՝ այդ շրջաններում թոնդրակյան աղանդավորների և ասորական եկեղեցու ազդեցությանը նրանց մոտ ծագած կրոնական ներքին վեճերի առթիվ³, նա վրդովմունքով հետևյալ խոսքն էր ուղղում ասորի առաջնորդներին.

1 Ձեռ. № 3295, էջ 383բ:

2 Ձեռ. № 8356, էջ 140բ:

3 «Թուղթ տեան Գրիգորիսի-կաթողիկոսի Հայոց, գրեալ-եղբոր նորին-Ներսիսի եպիսկոպոսի հրամանաւ նորին ի Միջագետս Ասորոց յԱմայք կոչեցեալ նահանգին, յաղագս որ անդ»

«Իւրաքանչիւր ոք յառաջնորդաց որպէս կամեցան եղին իւրեանց ժողովրդոցն աւանդութիւնս պէսպէս և զանազանս, որպէս և առ ձեզ բազում են դսրովելիք յայլոց՝ որպէս ուրբաթալէզն և ո՛չ խոստովանելն զմեղս և պիղծ կերակրոցն անխտրութիւն և այլք յուրովք»⁴:

Այստեղ ուրբաթալէզ բառը պէտք է ուղղել ուրբաթագել⁵:

Ուրբաթագել բառի նշանակութիւնը Շնորհալու այս հատվածից չի երևում, որովհետև բառը հիշված է պատահական կերպով: Բայց չի պարզվում նաև «Արմատ հաւատոյ»-ից, որովհետև նրա ժԵ գլխում ամփոփված նյութերը պատմական ծանոթութիւն չեն տալիս նրա մասին, — այդ անվանումը հայտնի էր ժամանակակիցներին, — այլ միայն պարզում են այս անվան տակ ընդդրկվող վեճի միայն էությունը, որ էր որոշել, թե 24 ժամերից բաղկացած օրվա սկիզբը ո՞րն է, տի՞վը, թե գիշերը: Այդ նպատակի համար վկայություններ են բերվում մի շարք հին հեղինակներից, այն է՝ Գեորգ կաթողիկոս հայոց, Սևերոս Անտիոքացի, Բարսեղ Կեսարացի, Որոգինես Աղեքսանդրացի, Դիոնեսիոս Աղեքսանդրացի, Կյուրեղ Աղեքսանդրացի և Հովհան Ոսկեբերան: Վկայություններից հենց առաջինը խորագրված է՝ «Ի հաւատոյ թըղթէն տեանն Գէորդայ Հայոց կաթողիկոսի որ առ պատրիարզն Ասորոց Յովանէս վասն ուրբաթագելի զի սուտ է»⁶:

Ուրեմն «Արմատ հաւատոյ»-ի ժԵ գլխի խորագրից և Գեորգ կաթողիկոսի հատվածի վերնագրից երևում է, որ հարցը կապված է ուրբաթ օրվա հետ, իսկ բերված վկայություններից երևում է, որ վեճը վերաբերում է միմիայն տիվ ու գիշերի հարցին: Իսկ թե ինչու՞ վ պիտի իրար հետ առնչված լինեն այս երկու հարցերը, դա չի երևում ոչ մի բանից:

Սակայն այդ խնդիրը մեզ համար պարզվեց «Արմատ հաւատոյ»-ի, և տվյալ դեպքում նրա ժԵ գլխի, աղբյուրների քննության ընթացքում: Պարզվեց, որ հայոց վերոհիշյալ կաթողիկոսի անունով բերված վկայությունը մի հատված է «Գիրք թղթոց»-ից հայտնի այն ընդարձակ նամակից, որը խորագրված է. «Տեանն Գէորգեայ Հայոց վերադիտողի և հոգեշնորհ փիլիսոփայի՝ պատասխանի թղթոյն Յովհաննիսի Ասորոց պատրիարգի»⁷: Ելվ. Տեր-Մինասյանի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ նամակը պատկանում

մերոյ ազգի քահանայից հակառակաբանելոյ անմտաբար ընդ միմեանս», տե՛ս «Թուղթ ընդ-նանրական, արարեալ երիցս երանեալ սուրբ հայրապետին մերոյ տեանն ներսիսի Շնորհալուոյ», էջմիածին, 1865, էջ 333—400:

Այս նամակում հիշատակված երևութների մեջ կա շատ բան, որ վերաբերում է թոնդրակյան հայ աղանդավորների գաղափարախոսությունը, բայց մի քանի հարցերում խոսքը հայտնապես ասորական ծագում ունեցող կարծիքների մասին է և հենց այդ հարցերում Շնորհալին պարսավանքի ծանր խոսքեր է ասում ասորական եկեղեցու հասցեին:

⁴ Անդ, էջ 358:

⁵ Դիտելի է, որ Շնորհալու այս թղթի բոլոր հրատարակություններում էլ ուրբաթալէզ ձևով է, բայց վերջին հրատարակությունը («Ընդհանրական թուղթը սրբոյն ներսիսի Շնորհալուոյ», Երուսաղեմ, 1871), որը նախորդ տպագրություններից բացի օգտագործել է նաև 8 ձեռագիր օրինակներ, բնագրում նույնպես ուրբաթալէզ դնելով հանդերձ (էջ 258), հայտնում է, որ ⁵ օրինակներ ունեն ուրբաթագել:

Նրանի պիտ. Մատենադարանում մեկ հայտնի երեք ձեռագիր օրինակներից երկուսն ունեն ուրբաթագել, ձեռ. № 944 (էջ 109ա)՝ XV դարից և № 227 (էջ 87բ)՝ XVII դարից. իսկ մեկ օրինակ ունի ուրբաթալէզ, ձեռ. № 841 (էջ 80բ)՝ XVIII դարից:

⁶ Ձեռ. № 3295, էջ 377ա:

⁷ Տեա «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 335—357:

է Գեորգ Լոռեցի կաթողիկոսի գրչին և պատասխան է հակոբիկ ասորիների պատրիարք Հովհաննես Բար-Շուշանի (1064—1072 թթ.) մի նամակին⁸: Վերջինիս բնագիրն այսօր մեզ մատչելի է Հ. Ա. Վարդանյանի կատարած գրաբարձ թարգմանությամբ⁹:

Այս թղթակցության մեջ քննության առարկա են դառնում ազգային-եկեղեցական ծեսերի վերաբերյալ մի շարք հարցեր, որոնց մասին վեճ կար հայերի և հակոբիկ ասորիների միջև:

Այդ վիճելի հարցերից մեկը՝ պահքի ժամերը որոշելու խնդիրն էր: Թե՛ հայ եկեղեցին և թե՛ ասորական հակոբիկ եկեղեցին տարվա բոլոր շորեքշաբթի և ուրբաթ օրերը համարում էին պահքի օրեր: Բայց ո՞ր ժամին պիտի սկսվեր պահքը. առավոտվանի՞ց, ինչպես ընդունում էր հայ եկեղեցին, թե նախորդ երեկոյից, ինչպես սովորություն էր ասորական եկեղեցում: Ասորի պատրիարքը պնդում էր, որ «յառաջագոյն է երեկոյն քան ղառաւաւտն, և գիշերն նախագոյն քան ղարն և մերն ճշմարիտ է», ուստի և «յերեկոյէ իսկ հսկեմք մեք և պահեմք յաւուր շորեքշաբթաթուոյն և ուրբաթուն»¹⁰:

Տարածայնությունը ծագում էր նրանից, որ հայերի կարծիքով օրվա երկու կեսերից առաջինը տիվն էր, իսկ երկրորդը՝ գիշերը, այլ խոսքով՝ օրը տևում էր մի առավոտից մինչև հաջորդ առավոտը. այն ինչ, ասորիների կարծիքով, օրվա առաջին կեսը գիշերն էր կազմում, իսկ տիվը՝ երկրորդ կեսն էր, ուստի՝ օրը տևում էր մի երեկոյից մինչև հաջորդ երեկոն: Կողմերի իրավացիությունը կայանում էր ապացուցելու մեջ, թե առաջնությունն օրվա ո՞ր կեսին էր պատկանում ըստ Ս. Գրքի: Ըստ էության, ինչպես մյուս հարցերում, այստեղ ևս հայ եկեղեցու կարգերի պաշտպանության խնդիրն էր գրված և ահա, օրինակ, մեկը այն տրամաբանական փաստերից, որ առաջ էր բերում Գեորգ Լոռեցին.

«Եւ դարձեալ զժամ շարշարանացն տեառն ասէ, թէ՛ էր ուրբաթ զատկին և էր ժամ վեցերորդ, և հանին զնա ի խաչ: Դարձեալ թէ՛ ՚ի վեցերորդ ժամու խաւար եղև ի վերայ երկրի: Որպէս դու կարծես՝ և երեկոյն է սկիզբն աւուրն, և ժամ խաւարին վեցերորդ էր օրն, ապա զիա՞րդ ի մէջ գիշերի խաւարն, կամ ո՞րպէս խաւարեցաւ արեգակն, զի ի մէջ գիշերի արեգակն ոչ երևի և ոչ խաւարի»¹¹:

Այս վեճը տևական բնույթ էր կրում հայերի և ասորիների միջև: Սակայն եթե XI դարում՝ Գեորգ Լոռեցու ժամանակ խնդիրը վերաբերում էր տարվա բոլոր շորեքշաբթիներին և ուրբաթներին, ապա, ինչպես երևում է, հետագայում՝ XII/XIII դարերում այլևս խոսք չկար շորեքշաբթի օրվա մասին և վեճը մնացել էր միայն ուրբաթի վրա, դրա համար էլ խնդիրը հայերի կողմից հատուկ կերպով անվանվում էր ուրբաթագել: Առ այժմ մեզ համար դեռ պարզ չէ, թե ինչո՞ւ շորեքշաբթին դուրս էր մնացել այս հին վեճի ոլորտից: Գուցն XII/XIII դարերում, Շնորհալու և Այգեկցու ժամանակաշրջանում, Ասորիքի և Միջագետքի կողմերում խաչակիրների ազդեցությամբ մտած սովորությամբ

⁸ Երվ. Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 241—251:

⁹ «Յովհաննէս Ժ. Բար-Շուշանի՝ հայոց կաթողիկոսին գրած թուղթը. Ուսումնասիրեց ու ասորի բնագրէ թարգմանեց Հ. Ա. Վարդանէան, Մխիթ. ուխտէն», Վիեննա, 1923:

¹⁰ Անդ, էջ 62:

¹¹ «Գիրք թղթոց», էջ 351:

ասորիներն ու հայերը պահելի էին համարում միայն ուրբաթ օրը՝ լքելով շորերը շաբթի օրվա պահը, ինչպես սովորութիւն էր լատինների մոտ¹²։

Այս վերջին հարցը, սակայն, էական նշանակութիւն չունի ներկա դեպքում։ Էականն այն է, որ, մեկնելով Գեորգ Լոռեցու և Հովհաննէս Բար-Շուշանի թղթակցութեան տվյալներից, գտնում ենք տիւ ու գիշերի վեճի և ուրբաթ անվանման միջև գոյութիւն ունեցող կապը, որը շէր երևում «Արմատ հաւատոյ»-ում։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ եկեղեցու ավանդական կարգերից մեկի խախտումն է, որ անվանվում էր ուրբաթագիւ. կամ պարզապես՝ զել. զել առնել։

Հայերեն լեզվի բառարաններին առհասարակ անծանոթ են զել և զել առնել։ Նոր Հայկազյանը միայն ունի ուրբաթալէզ կամ ուրբաթազել, որոնցից առաջինին նախընտրութիւն է տվել՝ անշուշտ համարելով, որ բառի բաղկացուցիչ երկրորդ մասը լէզ է (արմատ՝ լիզել բայի), որը և աղավաղվելով դարձած կլիներ զել. և ինչուիւ այս ենթադրութիւնից՝ ուրբաթալէզ կամ ուրբաթազել բառին տվել է այսպիսի բացատրութիւն. «Թերևս լիզումն և լուծումն միոյ ուրբաթու կամ աւուր միոյ ի պահոց, կարծեցեալ աւանդութիւն ինչ ուսուցական առ Յոյնս կամ առ Ասորիս»¹³։ Շնորհալու հիշյալ թղթի լատիններեն թարգմանութեան մեջ Հ. Կապպելլետտին ուրբաթալէզ-ը ենթադրել է որպես «superstitiones in cibis feriae VI» (ավելորդապաշտութիւններ՝ շաբաթվա 6-րդ օրվա ուտելիքների խնդրում)¹⁴։

Բայց այժմ, վերևում սլարոնաբանված պատմական իրողութեան լույսի տակ, կարելի է հաստատորեն ասել, որ զել բառը (ոչ զել) կապ ունի զելանել բայի հետ, որը նշանակում է «ելանել ըստ շափ, ըստ սահման»¹⁵ (շափից կամ սահմանից դուրս գալ), ուստի և զել՝ նշանակում է «շափի կամ սահմանի խախտում», զել առնել՝ «շափի կամ սահմանի խախտում կատարել», ուրբաթազել՝ «ուրբաթ օրվա սահմանների խախտում» (ուրբաթ օրվա սահմանի ժամերի խախտում)։

Բայց, իհարկե, զել-ը ոչ թե զելանել բայի արմատն է, այլ նրա մեջ որպես արմատ ընկալված և որպես այդպիսին նրանից հանված բառ է։ Հ. Աճառյանին հայտնի շի եղել զել-ը, այլապես այդ բառը նա կնշեր ել արմատ բառի տակ, ինչպես նշել է զելանել բայը՝ որպես զ նախդիրով ելանել¹⁶. նա ունի միայն ուրբաթալէզ՝ անշուշտ փոխ առնելով նոր Հայկազյանից, բայց՝ առանց բացատրութեան և առանց նշելու իր աղբյուրը¹⁷։

¹² Հմտ. M. A. van den Oudenrijn, „Linguae haicanae scriptores“ etc., Bernae, 1960, p. 109—110, § 139.

¹³ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 559։

¹⁴ „Sancti Nerstetis Clajensis Armentorum catholici Opera, nunc primum ex Armenio in Latium conversa notisque illustrata, studio et labore D. Josephi Cappelletti, presbytero Veneti“, vol. I, Venetiis, 1838, p. 45.

¹⁵ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 729։

¹⁶ Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հտ. Բ, Երևան, 1928, էջ 664—665։

¹⁷ Անդ, հտ. Ե, Երևան, 1931, էջ 698։